

Լ Ր Ա Ց ՈՒ Ց Ի Չ Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստի (N 5)

13 ապրիլի 2012թ.

Ժամը 15⁰⁰

1. ԱՄՆ-ի «Հայ կրթական հիմնարկություն» Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լորուտ գյուղի եռահարկ ուսումնական մասնաշենքի տանիքի վերանորոգում և ցանկապատում» ծրագրի մասին:
(Ստեփան Նալբանդյան)
2. «Հանուն բարության» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին» ծրագրի մասին:
(Անտոնինա Աբրահամյան)
3. «Շողիկ» հայկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հոգ Հայաստանին» ծրագրի մասին:
(Գևորգ Մինասյան)
4. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Գետահովիտ, Կոթի և Ոսկան համայնքների մանկապարտեզների համար կահույքի ձեռքբերում» ծրագրի մասին:
(Ռոբերտ Հակոբյան)

5. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին (Արման Բարխուդարյան)

- 5.1 Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:
- 5.2 «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:
- 5.3 ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարդասիրական օգնություն Հայաստանին» ծրագրի մասին:
- 5.4 «Սարդարապատ» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:
- 5.5 «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում բեռների ներմուծման մասին:
- 5.6 «Արթիկի N 1 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:
- 5.7 Հայաստանի հրեական համայնքի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

5.8 «Երևանի Ռոտարի ակումբ» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին:

5.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 21-ի N Մ-883-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին N 4 («Մատենադարան» հիմնադրամ):

6. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին (Արման Բարխուդարյան)

- 6.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի մարտի 23-ի N Մ-197-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Մատենադարան» հիմնադրամ):
- 6.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի մարտի 23-ի N Մ-197-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N 1 («Մատենադարան» հիմնադրամ):
- 6.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 27-ի N Մ-029-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Արմենակ և Աննա Թադևոսյանների անվամբ բուժարան» բարեգործական հիմնադրամ):
- 6.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի N Մ-442-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն):
- 6.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 13-ի N Մ-299-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին («Փյունիկ» բարեգործական հիմնադրամ):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2012 թվականի N Մ- -Ա

ԱՄՆ-Ի «ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ԿՈՐԱԽՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒՄԱՐԶԻ
ԼՈՐՈՒՑ ԳՅՈՒՂԻ ԴՊՐՈՑԻ ԵՌԱՀԱՐԿ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱՃԵՆՔԻ
ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՑԻՆԿԱՊԱՏՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2012 թվականի ապրիլի 10-ի N 3/3.8-1/4509-12, Հայաստանի
Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի ապրիլի 11-ի
N 02/2179-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության
2012 թվականի ապրիլի 10-ի N 03/07-1/3498-12, Հայաստանի Հանրապետության կառա-
վարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի ապրիլի 10-ի N
ԱԱ/3-4/3044-12 ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2012 թվականի
ապրիլի 10-ի N 102.1/104.3/1970-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է .**

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի «Հայ կրթական հիմնարկություն» Հայաստանի
մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մեսրոպ Մաշտոցի 13, ՀՎՀՀ՝ 01542952)՝ իրա-
կանացվող՝ 5650000 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապետության Լոռու
մարզի Լորուտ գյուղի դպրոցի եռահարկ ուսումնական մասնաշենքի տանիքի վերանորո-
գում և ցինկապատում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպա-
տակով ԱՄՆ-ի «Հայ կրթական հիմնարկություն» Հայաստանի մասնաճյուղի կողմից
կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրակա-
նացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝


«Դիալոգ Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01533033) 2012 թվականի ապրիլի 2-ին
կնքված N 3 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի
ապրիլի 20-ից մինչև հունիսի 25-ը ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրա-
պետության Լոռու մարզի Լորուտ դպրոցի եռահարկ ուսումնական մասնաշենքի տանիքի
վերանորոգման և ցինկապատման աշխատանքների իրականացում՝ 5650000 դրամի չա-
փով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. ԱՄՆ-ի «Հայ կրթական հիմնարկություն» Հայաստանի մասնաճյուղին
ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հան-
րապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժո-
ղով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաս-
տանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հան-
րապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաս-
տանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԱՄՆ «Հայ կրթական հիմնարկություն» ՀՀ մասնաճյուղ կազմակերպության
Գործադիր տնօրեն Ստեփան Նալբանդյան
«04» ապրիլ 2012 թ.



Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Վ Մ
Հ Հ Լ Ո Ր Ի Ի Ս Ա Ր Զ Ի Լ Ո Ր ՈՒՑ Գ Յ ՈՒՂ Ի Դ Պ Ր ՈՑ Ի
Վ Ե Ր Ա Ն Ո Ր Ո Ղ ՈՒ Մ Ե Վ Ց Ի Ն Կ Ա Պ Ա Տ ՈՒ Մ

1. Ծրագրի նպատակը	ՀՀ Լոռուի մարզի Լորուտ գյուղի դպրոցի եռահարկ ուսումնական մասնաշենքի տանիքի վերանորոգման և ցինկապատման աշխատանքների իրականացում:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ամրակալվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից:
3. Բարեգործը	ԱՄՆ «Հայ կրթական հիմնարկություն» 600 West Broadway Suite 130, Glendale, CA 91204, (818) 242-4154
4. Ծրագիրը կատարողը	ԱՄՆ «Հայ կրթական հիմնարկություն» ՀՀ մասնաճյուղ (ՀՀ, քաղ. Երևան, Մաշտոցի պող. 13, ՀՀՀՀ՝ 01542952) հեռ. 53-14-85, 091498071p2
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Լոռուի մարզի Լորուտ գյուղի դպրոցը: Կրթության բնագավառ:
6. Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 5 650 000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:
7. Բարեգործություն ստացողը	ՀՀ Լոռուի մարզի Լորուտ գյուղի համայնքը:
8. Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացվել 2012 թ. ապրիլի 20-ից մինչև 2012 թ. հունիսի 30-ը
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անմիջապես ֆինանսական միջոցների ծավալը	ՀՀ Լոռուի մարզի Լորուտ գյուղի դպրոցի եռահարկ ուսումնական մասնաշենքի տանիքի վերանորոգման և ցինկապատման աշխատանքները՝ փայտյա կոմստրուկցիաների վերանորոգում և փոխարինում նորով, ջրիտարանների և ջրատարների կառուցում, նախկին ագրոչիֆերյա տանիքի քանդում և նոր ցինկապատում և այլն:

20.5/1

10.	Չեղք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող զինք	ՀՀ Լոռիի մարզի Լորուտ գյուղի դպրոցի եռահարկ մասնաշենքի տանիքի վերանորոգման և ցինկապատման աշխատանքները իրականացնելու է «Դիալոգ Գրուպ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 01533033) որի նախահաշվային արժեքը կազմում է՝ 5.650.000 (հինգ միլիոն վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ: Առանց ԱԱՀ 20%-ի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ՀՀ կրթության և գիտության նախարարության և ՀՀ Լոռիի մարզային կրթության վարչության հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացնելու է ԱՄՆ-ի Հայ կրթական հիմնադրության բարեգործների խորհուրդը և ՀՀ -ում մասնաճյուղի տնօրինությունը, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային և ամիսիկ հաշվետվություններ):



ԱՄՆ «Հայ կրթական հիմնադրություն» ՀՀ մասնաճյուղ կազմակերպություն
Գործադիր տնօրեն՝ Ստեփան Նալբանդյան

«04» ապրիլ 2012թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ ՈՐ Գ Ա Ն Ձ Ա Գ Ե Տ

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

10.04.12 № 3/38-1/4509-12

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 05.04.12թ. N 15/15.4/4936-12 գրության՝ կապված <<ԱՄՆ-ի Հայ կրթական հիմնադրություն>> կողմից իրականացվող <<< Լոռու մարզի Լորուտ գյուղի դպրոցի եռահարկ ուսումնական մասնաշենքի տանիքի վերանորոգում և ցինկապատում>> ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ որոշման նախագծին կցված պայմանագրի արժեքը գերազանցում է ծրագրի բյուջեին:

Հարգանքով

Ատոմ Զանչուղաջյան

N 034/9438-12
10.04.12թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

4-5/1

N 02/2179-12

11-04-12

0078 Երևան, Հայաբյան 41", հեռ. 380385
Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Ի կատարումն ՀՀ կառավարության 2012թ. ապրիլի 5-ի
15/15.4/4936-12 թվակիր հանձնարարականի

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայտնում ենք, որ «Հայ կրթական հիմնարկություն» Հայաստանի մասնաճյուղի
կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լորուտ գյուղի
դպրոցի եռահարկ ուսումնական մասնաշենքի տանիքի վերանորոգում և
ցինկապատում» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

[Signature]

Գ. Մուրադյան

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա. Ստեփանյան, հեռ.՝ 380-227

N 035/9598-12
11.04.12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

DEPUTY MINISTER

4-5/1

ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Տեղ./Tel.: 58 03 02, ֆաքս/ֆաքս (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: mien@edu.am, www.edu.am

N 03/07-1/3498-12 10.04 2012

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր սույն թվականի ապրիլի 5-ի N15/15.4/4936-12 գրության՝
հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի ԱՄՆ-ի «Հայ կրթական հիմնարկություն»
Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Լոռու
մարզի Լորուտ գյուղի դպրոցի եռահարկ ուսումնական մասնաշենքի տանիքի
վերանորոգում և ցինկապատում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ
կրթության և գիտության նախարարությունը դիտողություններ և առաջարկություններ
չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

[Signature]

Մ.ՄԿՐՏՅԱՆ

Կատ. Ն. Սահակյան
հեռ. 524777

N 031/9375-12
10.04.12



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ *41-5/1*

0015, Երևան, Մ. Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

N 2124/3-4/3044-12
10.04.12թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 05.04.2012թ. թիվ 15/15.4/4936-12 գրությանը կից ներկայացված «ԱՄՆ-ի
«Հայ կրթական հիմնարկություն» Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող
«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լորուտ գյուղի դպրոցի եռափարկ
ուսումնական մասնաշենքի տանիքի վերանորոգում և ցինկապատում» ծրագրի
մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ հայտնում եմ.

Կից ներկայացված ծրագրի 10-րդ կետի համաձայն վերանորոգման
աշխատանքների արժեքը կազմում է 5.650.000 դրամ, այն դեպքում, երբ 6-րդ
կետում ծրագրի ընդհանուր բյուջեն նշված է 5.560.000 դրամ: Ելնելով վերոգրյալից՝
առաջարկում եմ ճշտել նշված արժեքային անհամապատասխանությունը:

Ա. ԱղաՎերդյան

N 044/9391-12
10.04.12թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ *41-5/1*

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-28-77

թիվ *102.1/104.3/1970-12*
« *10* » *04* 2012 թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր 05.04.2012թ. թիվ 15/15.4/4936-12 գրությանը.

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Լոռու մարզպետարանը չի առարկում ԱՄՆ-ի «Հայ կրթական հիմնարկություն»
Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող՝ «Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Լորուտ գյուղի դպրոցի եռափարկ ուսումնական մասնաշենքի տանիքի
վերանորոգում և ցինկապատում» ծրագիրը բարեգործական որակելուն:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԱՂԱՎԵՐԴՅԱՆ

N 114/9437-12
10.04.12թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՐՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2012 թվականի N Մ -
քաղ. երևան

- Ա

20.5/2

**«ՀԱՆՈՒՆ ԲԱՐՈՒԹՅԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԴԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մարտի -ի N 3/3.8-1/-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի մարտի -ի N -12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի մարտի -ի N ՀՔ/22/-12, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի -ի N ԱԱ/3-4/-12 և Երևանի քաղաքապետի 2012 թվականի մարտի -ի N 01/14/4605-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է:**

1. Բարեգործական որակել «Հանուն բարության» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 161280000 դրամ ընդհանուր արժողությամբ «Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին» ծրագիրը (կցվում է):

2. «Հանուն բարության» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշման ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Երևանի քաղաքապետին:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ԱՄՆ-ի «Հայ կրթական հիմնադրություն» Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լորուտ գյուղի դպրոցի եռահարկ ուսումնական սանձաշենքի տանիքի վերանորոգում և ցինկապատում» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
ՀՀ ֆինանսների նախարարության և առաջարկությունների վերաբերյալ	Հիմնավորում
Որոշման նախագծի վերաբերյալ հայտնում են, որ որոշման նախագծին կցված պայմանագրի արժեքը գերազանցում է ծրագրի բյուջեն:	- Կազմակերպությունը ներկայացրել է ծրագրի ուղղված տարբերակը (կցվում է):
ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ	Հիմնավորում
Որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ հայտնում են. Կից ներկայացված ծրագրի 10-րդ կետի համաձայն վերանորոգման աշխատանքների արժեքը կազմում է 5.650.000 դրամ, այն դեպքում, երբ 6-րդ կետում ծրագրի ընդհանուր բյուջեն նշված է 5.560.000 դրամ: Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում են ճշտել նշված արժեքային անհամապատասխանությունը:	- Կազմակերպությունը ներկայացրել է ծրագրի ուղղված տարբերակը (կցվում է):

20.5/1



Աջակցություն Սոցիալապես անապահով ընտանիքներին

Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների, սոցիալապես անապահով բազմազավակ և հաշմանդամ, միայնակ թոշակառու, կարիքավոր ընտանիքների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների 2012թ. ապրիլ-2014թ. ապրիլ ժամկետային ծրագիր

1	Ծրագրի նպատակը	Կազմակերպել զոհված ազատամարտիկների, սոցիալապես անապահով բազմազավակ և հաշմանդամ, միայնակ թոշակառու, կարիքավոր թվով 640 ընտանիքների նյութական աջակցություն, որը կնպաստի աղքատության նվազեցմանը: Նյութական աջակցություն, բացի ծրագրում ընդգրկված շահառուներից, նախատեսել նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում հաշվառման վեցված միայնակ հաշմանդամ տարեցներին և երևանի քաղաքապետարանի միջոցով սոցիալապես անապահով խավերին:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակներն ըստ ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 16-ի N 66 –Ն որոշմանը հաստատված « Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 3-րդ կետի	3-րդ կետի բ) ենթակետի համաձայն օգտվել հարկային և մաքսային արտոնություններից:
3	Բարեգործը (բարեգործները)	«Հանուն Բարության» Բարեգործական հիմնադրամ
4	Ծրագիրն իրականացնողները	«Հանուն Բարության» Բարեգործական հիմնադրամ (ՀՀ ք. Երևան, Արշակունյաց 4/3 - իրավաբանական, Ֆոիկի 42ենք, բն. 2 - գործունեության, 7477 - 02570568)
5	Ծրագրի իրականացման վայրը (վայրերը), բնագավառը	ք. Երևան Սոցիալական բնագավառ

6	Ծրագրի բյուջեն (ստացվելիք գումարներն ըստ ֆինանսավորման աղբյուրների, դրանց ստացման նախատեսվող ժամկետները, կատարման ենթակա ծախսերի նախատեսվող ուղղությունները, չափերը և ժամկետները)	Ծրագրի բյուջեն 01.04.2012թ. – 30.04.2014թ. նախատեսվում է 175.795.200 դրամ, որը բացի շահառուներին տրվող դրամական օգնությունից (46.080000 դրամ) և նյութական աջակցության համար նախատեսված գումարից (115.200000 դրամ) ներառում է նաև կազմակերպչական 9 % ծախսեր (14.515.200դրամ): Ընդհանուր ծախսերը մեկ տարվա կտրվածքով կազմում են շուրջ 87.897.600դրամ: Ծրագրի ֆինանսավորումը իրականացնում է «Հանուն Բարության» Բարեգործական հիմնադրամը:
7	Բարեգործություն ստացող	Շահառուները կազմակերպությունում հաշվառման են վերցվում ՀՀ պաշտպանության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների և Երևանի քաղաքապետարանի կողմից տրված փաստաթղթերի հիման վրա՝ նպատակ ունենալով մեղմելու երևանում բնակվող զոհված ազատամարտիկների, սոցիալապես անապահով բազմազավակ և հաշմանդամ միայնակ թոշակառուների ընտանիքների սոցիալական վիճակը: Նախատեսել շահառուների ամենամյա դրամական և ապրանքային օգնություն,մինչև ծրագրի ավարտը՝ նպատակ ունենալով բարելավել թվով 640 ընտանիքների սոցիալական պայմանները:

8	Ծրագրի իրականացման տևողությունը և/կամ սկիզբը, ավարտը	01.04.12 – 30.04. 2014թ.																																								
9	Միջոցառումների (ըստ փուլերի, եթե այդպիսիք հնարավոր է առանձնացնել) նկարագրությունը և ժամկետները, ամփոփեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2012թ. ապրիլից զոհված ազատամարտիկների սոցիալապես անապահով բազմազգակ և հաշմանդամ միայնակ թոշակատուների ընտանիքների օժանդակության ծրագրի իրականացման համար նախատեսվող 161.280.000 դրամից՝ 6 ամիս ժամկետով 640 ընտանիքներ կստանան 46.080.000 դրամ էլ, էներգիայի կամ գազի ծախսերի վճարման համար՝ յուրաքանչյուրին 12000 դրամ և նյութական աջակցություն 10000 դրամի չափով: 18 ամիս ժամկետով 640 ընտանիքներ կստանան յուրաքանչյուրը անասական 10000 դրամի չափով նյութական օգնություն 115200000 դրամ արժեքով:																																								
10	Չեղք բերվելիք ապրանքների, ծառայությունների և աշխատանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը (եթե հայտնի են, ապա պետք է նշել նաև գործարքների կողմերը, միջնորդ իրավաբանական կամ/և ֆիզիկական անձից, այդ թվում նաև բարեգործական բեռի ներմուծման հետ կապված)	Ծրագրում ընդգրկված շահառուներին 6 ամիս ժամկետով կիստկացվի 12000 դրամ՝ էլ, էներգիայի կամ գազի վճարման համար, ինչպես նաև, 18 ամիս ժամկետով 10000 դրամ արժողությամբ նյութական օգնություն: Ամսեկան մեկ ընտանիքի հաշվով նյութական օգնության հաշվարկ <table><tr><th>Ապրանքի անվանումը</th><th>Չափի միավորը</th><th>Քանակը</th><th>Միավորի արժեքը (դրամ)</th></tr><tr><td>Բուսական յուղ</td><td>լիտր</td><td>1</td><td>900</td></tr><tr><td>Բրինձ</td><td>կգ</td><td>1</td><td>430</td></tr><tr><td>Ուսյ</td><td>կգ</td><td>1</td><td>600</td></tr></table> <table><tr><th>Հնդկաձավար</th><th>կգ</th><th>1</th><th>800</th></tr><tr><td>Ուրտ</td><th>սառնի</th><th>1</th><th>700</th></tr><tr><td>Շաքարավազ</td><th>կգ</th><th>2</th><th>980</th></tr><tr><td>Վերսիշել</td><th>կգ</th><th>1</th><th>350</th></tr><tr><td>Այուր</td><th>կգ</th><th>1</th><th>230</th></tr><tr><td>Ընդամենը</td><td></td><td></td><td>4990</td></tr></table> 18 ամսվա համար ձեռքբերվող ապրանքների արժեքը կազմում է 57484800 դրամ: Փաթեթավորում՝ 115200 դրամ: Դրամական օգնության մեկ ընտանիքի հաշվով ամսական 5000 դրամ՝ 18ամսվա համար կազմում է 57600000 դրամ:	Ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի արժեքը (դրամ)	Բուսական յուղ	լիտր	1	900	Բրինձ	կգ	1	430	Ուսյ	կգ	1	600	Հնդկաձավար	կգ	1	800	Ուրտ	սառնի	1	700	Շաքարավազ	կգ	2	980	Վերսիշել	կգ	1	350	Այուր	կգ	1	230	Ընդամենը			4990
Ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի արժեքը (դրամ)																																							
Բուսական յուղ	լիտր	1	900																																							
Բրինձ	կգ	1	430																																							
Ուսյ	կգ	1	600																																							
Հնդկաձավար	կգ	1	800																																							
Ուրտ	սառնի	1	700																																							
Շաքարավազ	կգ	2	980																																							
Վերսիշել	կգ	1	350																																							
Այուր	կգ	1	230																																							
Ընդամենը			4990																																							
11	Ամմիջական շահառուների սպառմանը չուղղվող ծախսերը (կազմակերպչական ծախսեր), դրանց կատարման կարգը, այդ ծախսերի չափաբաժիններն ըստ ծրագրի փուլերի, եթե այդպիսիք առանձնացված են	Կազմակերպական ծախսերը կապված գրասենյակի գործունեության հետ կկազմեն ընդհանուր բյուջեի 9 % կամ շուրջ 14.515.200 դրամ, յուրաքանչյուր տարվա կտրվածքով 7.257.600 դրամ, որից՝ Աշխատավարձ՝ 3802500 դրամ Մեք. Վճար՝ 705375 դրամ Մեքենակազմի շահագործում՝ 2749725 դրամ:																																								
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ (եթե համագործակցություն նախատեսվում է), համագործակցության բովանդակությունը, իրականացման կարգը	Ծրագրի արդյունավետ իրականացման համար նախատեսում ենք համագործակցություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Երևանի քաղաքապետարանի հետ:																																								
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը (եթե վերահսկողություն նախատեսվում է)	Ծրագրի կատարման վերահսկողությունը կիրականացվի «Համուն Բարության» Բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից: Կազմակերպության գործունեության վերաբերյալ սահմանված կարգով եռամսյա տեղեկատվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման համեմատողով:																																								



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱԴԵՏ

ա. 5/2

0010, Երևան, Մելիք-Արամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

29.03.12 № 338-1/3928-12

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 28.03.12թ. գրության և իլյումն մեր 20.03.2012թ N 3/3.8-1/3251-12
գրության՝ կապված <<Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին>> ծրագրի
լրամշակված տարբերակի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում
դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանցուղազյան

034/8245-12



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
ա. 5/2

0078 Երևան, Հայաբյան 41", հեռ. 380385
Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am

02/1691-12
22.03.12

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Ի կատարումն ՀՀ կառավարության 2012թ. մարտի 16-ի
15/15.1/3559-12 թվակիր հանձնարարականի

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայտնում ենք, որ «Հանուն Բարության» բարեգործական հիմնադրամի կողմից
իրականացվող «Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին» ծրագրում
անհրաժեշտ է առանձին կետով նշել բարեգործություն ստացողին: Ծրագրի ամբողջ
տեքստում «<< սոցիալական ապահովության նախարարություն» բառերն անհրաժեշտ
է փոխարինել «<< աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն»
բառերով: Ծրագրի 5-րդ կետում անհրաժեշտ է նշել ծրագրի բնագավառը: Ծրագրի
8-րդ կետում հստակեցման կարիք ունի ծրագրի իրականացման տևողությունը, քանի
որ նշվածից պարզ չէ, թե երբ է ավարտվում ծրագիրը:

Այդ առումով առաջարկում ենք լրամշակել և հստակեցնել ներկայացված ծրագրի
դրույթները:

Հարգանքով՝

Գ. Մուրադյան

035/8349-12



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

21-5/2

«19» 03 2012 թ.

N 89/42.01-5/1814-12

Ձեռ 2012-03-16, 15/15.1/3559-12

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հանուն բարության»
բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն սոցիալապես
անապահով ընտանիքներին» ծրագրի մասին» որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ
նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և
առաջարկություններ չունի:

Հարգանքներով՝

Յ. Բեքիկյան

040/6906-12

Կատարող՝ Միջազգային կապերի բաժին
հեռ.563-791

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 65, ֆաքս. (374 10) 54 31 60 <http://www.mss.am>



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

21-5/2

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

BB D7-647E-6648 «Հանուն բարության» բարեգործական հիմնադրամի
տնօրեն տիկին Ա. Աբրահամյանին

4.04.12

պարոններ՝ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Ի պատասխան Ձեր 02.04.2012թ. և 03.04.2012թ. գրությունների հայտնում եմ.

Կից ներկայացված «Աջակցություն սոցիալապես անապահով
ընտանիքներին» բարեգործական ծրագրի լրամշակված տարբերակի վերաբերյալ
լրացուցիչ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անողակի հարկերի բաժին, հեռ. 594652

044/8951-12



ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

ԼՐ 5/2

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 02/34-131854

«26» 03 2012թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՕՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 16.03.2012թ. հ. 15/15.1/3559-12 գրության՝ տեղեկացնում եմ, որ Երևանի քաղաքապետարանում քննարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հանուն բարության» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին» ծրագրի մասին» որոշման նախագիծը, որի վերաբերյալ ներկայացնում ենք.

հիմնադրամի կողմից «Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին» ծրագրում ներկայացված է, որ «Շահառուները կազմակերպությունում հաշվառման են վերցվում ՀՀ պաշտպանության նախարարության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Երևանի քաղաքապետարանի կողմից տրված փաստաթղթերի հիման վրա»: Հասկանալի չէ թե ինչ փաստաթղթերի հիման վրա են ընտրվել շահառուները, երբ Երևանի քաղաքապետարանի կողմից շահառուների և նրանց փաստաթղթերի վերաբերյալ որևէ տեղեկատվություն ներկայացված չէ հիմնադրամին:


Օրագրում պարզ չէ նաև յուրաքանչյուր շահառուին տրամադրվելիք 10000 դրամի չափով նյութական աջակցության հասկացությունը:

Հետևաբար՝ նման թերություններով ծրագիրը չենք կարող որակել որպես բարեգործական:

Հարգանքով՝

[Signature]

Կ. ԱՐԵՅԱՆ



Կատ. Ռ. Զաքարյան
հեռ. 51 41 79

Հայաստանի Հանրապետություն

Բարեգործական հիմնադրամ

«ՀԱՆՈՒՆ ԲԱՐՈՒԹՅԱՆ»



Республика Армения

Благотворительный фонд

<< Во имя добра >>

<<For the sake of the kindness>> charitable fund ԼՐ 5/2

Հաշվեհամար՝ «Հայելոնոմբանկ» Շահումյանի մասնաճյուղ հ/հ 163028138101

ք. Երևան, Ֆրիկի 4, բն. 2

թ. 098-45-88-88

էլ. փոստ abrahamyan.antonina@mail.ru

г. Ереван ул. Фрика 4 кв. 2

тел. сот. 098-45-88-88

эл. почта abrahamyan.antonina@mail.ru

А «10» 04 2012 г.

ՀՀ կառավարության բարեգործական

ծրագրերի համակարգման

հանձնաժողովի նախագահ՝ պարոն

Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Ս.Տեր-Սիմոնյան


Ի պատասխան Ձեր 27.03.2012թ. թիվ 15/15.1/4314-12 գրության, Ձեզ է ուղարկվում «Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին» ծրագրի լրամշակված տարբերակը, որը քննարկվել և համաձայնեցվել է է ՀՀ Ֆինանսների նախարարության, ՀՀ Արդարադատության նախարարության, ՀՀ ԿԱ Պետական Եկամուտների Կոմիտեի և Երևանի քաղաքապետարանի հետ:

Տնօրեն՝



Ա.Աբրահամյան

[Signature]



«Համուն բարության» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ

Հիմնավորում	Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը
Երևանի քաղաքապետարան – 26.03.12, N 02/34-13185հ	
1. Կցված են կազմակերպության պարզաբանումը և ծրագրի լրամշակված տարբերակը, որը համաձայնեցված է Երևանի քաղաքապետարանի հետ	1. Ինչպես են ընտրվել շահառուները 2. Պարզաբանել յուրաքանչյուր շահառուին տրամադրվելիք 10000 դրամի չափով նյութական աջակցություն համակցությունը

Ձ-5/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
2012 թվականի N Մ-
քաղ. երևան

-Ա Ձ-5/3

«ՇՈՂԻԿ» ՀԱՅԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐ-
ՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ «ՀՈԳ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» ԾՐԱԳՐԻ
ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մարտի -ի N 3/8-1/-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի մարտի -ի N -12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի մարտի -ի N ՖԲ/ԱՆՄ-5/ 12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի -ի N ԱԱ/3-4/-12 ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2012 թվականի մարտի -ի N 1-01/-12, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2012 թվականի մարտի -ի N 1-01/-12, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2012 թվականի մարտի -ի N 1-01/-12, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի մարտի -ի N 1-01/-12 և Երևանի քաղաքապետի մարտի -ի N 1-01/-12 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «Շոդիկ» հայկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ 700000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով «Հոգ Հայաստանին» ծրագիրը (կցվում է):

2. Առաջարկել Շոդիկ» հայկական բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև

կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Շիրակի մարզպետներին ու Երևանի քաղաքապետին:

20.5/3

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Շողիկ» ՀԲՀ-ի կազմակերպության
անօրեն
Գ Մինասյան
15/05/2012թ.

ՀՈԳ ՀՍԹԱՍՏԱՆԻՆ՝
ծրագիր

1.	Ծրագրի նպատակը	Ազակցություն ցուցաբերել կազմակերպությունում գրանցված սոցիալապես անապահով ընտանիքներին, զոհված ազատամարտիկների ընտանիքներին, բազմազավակ ընտանիքներին: Կազմակերպել անապահով ճամբար 7-16 տարեկան երեխաների համար, Արագածոտնի մարզ գ. Կարբի: Ապրանքի տեսքով ստացված օգնությունը՝ հագուստ, կոշիկներ, կենցաղային իրեր, սնունդ, խաղալիքներ, հիգիենիկ պարագաներ տրամադրել, բացի ծրագրում ընդգրկված շահառուներից մահ. ՀՀ Սոցիալական ապահովության նախարարությունում հաշվառման վերջված սոցիալապես անապահով ընտանիքներին, տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով սոցիալապես անապահով խավերին, գիշերօթիկ և մանկական կրթական հաստատություններին:
2.	Ծրագրի՝ բարեգործական որակման նպատակներն ըստ ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի № 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 3-րդ կետի	3-րդ կետի բ) ենթակետի համաձայն օգտվել հարկային և մաքսային արտոնություններից:
3.	Բարեգործը (բարեգործները)	Անգլիայի «Հայկական ծառայություններ» բարեգործական հիմնադրամ
4.	Ծրագիրն իրականացնողները	«Շողիկ» հայկական բարեգործական հասարակական կազմակերպություն ք. Երևան, Նոր Արեւ, 26 փողոց 59/1, ՀՎՀՀ՝ 00438145

20.5/3


5.	Ծրագրի իրականացման վայրը (վայրերը), բնագավառը	Ծրագիրը առընչվում է սոցիալական ոլորտին և ընդգրկում է Երևան քաղաքը, Արարատի մարզը, Արմավիրի մարզը, Արագածոտնի մարզը, Շիրակի մարզը, ԼՂՀ-ը:
6.	Ծրագրի բյուջեն (ստացվելիք գումարներն ըստ ֆինանսավորման աղբյուրների*, դրանց ստացման նախատեսվող ժամկետները, կատարման ենթակա ծախսերի նախատեսվող ուղղությունները, չափերը և ժամկետները)	Ծրագրի բյուջեն 2012թ. ապրիլի 1-ից – 2014թ. դեկտեմբերի 31-ը. համար 700.000 ԱՄՆ դոլար:
7.	Ծրագրի շահառուները* կամ մրանց ընտրության սկզբունքները, չափանիշները (կարող են նշվել նաև այն միջնորդավորված շահառուները, որոնց կենսապահովման, գործունեության պայմանները կբարելավվեն ծրագրի անմիջական շահառուի գործունեության արդյունքում)	Ծրագրի շահառուներն են Երևան քաղաքի (մոտ 400), Արարատի մարզի (մոտ 150), Արմավիրի մարզի (մոտ 100), Արագածոտնի մարզի (մոտ 250), Շիրակի մարզի (մոտ 100) ԼՂՀ-ի (մոտ 150) սոցիալապես անապահով ընտանիքները, գնելված ազնատամարտիկների ընտանիքները նաև ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը և/կամ սկիզբը, ավարտը	2012թ. ապրիլի 1-ից – 2014թ. դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների (ըստ փուլերի, եթե այդպիսիք հնարավոր է առանձնացնել) նկարագրությունը և ժամկետները, ամբողջությամբ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի փուլերը 1-ին փուլ -2012թ. հունիսի 15-ից Երևան քաղաքի, Արարատի մարզ, Արմավիրի մարզ, Արագածոտնի մարզ, Շիրակի մարզ, ԼՂՀ-ի սոցիալապես անապահով ընտանիքների, ազատամարտիկների ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում:

		-«Երբ գալիս է սեպտեմբերը» ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ ծրագրի շրջանակներում գրենական պիտույքների հագուստի նվիրաբերում Երևան քաղաքի, Արարատի մարզի, Արմավիրի մարզի, Արագածոտնի մարզի, Շիրակի մարզի, ԼՂՀ-ի անապահով ընտանիքների և ազատամարտիկների ընտանիքների երեխաների երեխաների և ազատամարտիկների ընտանիքների երեխաներին: 2-րդ փուլ -2013թ. հունիսի 15-ից Երևան քաղաքի, Արարատի մարզի, Արմավիրի մարզի, Արագածոտնի մարզի, Շիրակի մարզի, ԼՂՀ-ի սոցիալապես անապահով ընտանիքների, ազատամարտիկների ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում: -«Երբ գալիս է սեպտեմբերը» ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ ծրագրի շրջանակներում գրենական պիտույքների հագուստի նվիրաբերում Երևան քաղաքի, Արարատի մարզի, Արմավիրի մարզի, Արագածոտնի մարզի, Շիրակի մարզի, ԼՂՀ-ի անապահով ընտանիքների և ազատամարտիկների ընտանիքների երեխաներին: 3-րդ փուլ -2014թ. հունիսի 15-ից Երևան քաղաքի, Արարատի մարզի, Արմավիրի մարզի, Արագածոտնի մարզի, Շիրակի մարզի, ԼՂՀ-ի սոցիալապես անապահով ընտանիքների ազատամարտիկների ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում: -«Երբ գալիս է սեպտեմբերը» ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ ծրագրի շրջանակներում գրենական պիտույքների հագուստի նվիրաբերում Երևան քաղաքի, Արարատի մարզի, Արմավիրի մարզի, Արագածոտնի մարզի, Շիրակի մարզի, ԼՂՀ-ի սոցիալապես անապահով ընտանիքների ազատամարտիկների ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում:
10.	Չեղք բերվելիք և ծառայությունների համառոտ նկարագիրը (եթե հայտնի են, ապա պետք է նշել նաև գործարքների կտրվելը, միջնորդ իրավաբանական կամ և ֆիզիկական անձի, այդ թվում նաև բարեգործական բնույթի մեքենան հետ կապված)*	Նախատեսված է բարերարի կողմից բռնի մերժումում և անհատույց բաշխում: Ներմուծում -հագուստ, կոշիկ, սպիտակեղեն, խաղալիք – 390.000 ԱՄՆ-ի դոլար - բաշխման համար -սնունդ – 60.000 ԱՄՆ,- դոլար - ճամբարի կազմակերպման և բաշխման համար -ֆիզիկական պարագաներ – 20.000 ԱՄՆ-ի դոլար - ճամբարի կազմակերպման և բաշխման համար -համակարգիչներ (20 հետ, մոդ) – 8.000 ԱՄՆ-ի դոլար գույք (սեղան, աթոռ, պահարան, մահճակալ, հեծանիվ, սայլակ) – 72.000 ԱՄՆ-ի դոլար ճամբարի կազմակերպման համար

	գրեմական պիտույքներ, դպրոցական պատասկ – 130.000 ԱՄՆ-ի դոլար – «Երբ գալիս է սնույտները» և ճամբարի փուլերը իրականացնելու համար -Ամառային ճամբար կազմակերպելու համար նախատեսված ծախսեր – 20.000 ԱՄՆ-դոլար (ներխաների տեղափոխում, կոնուալ և ընթացիկ ծախսեր), որից տեղական շուկայից ձեռք բերվող ապրանքներ (հաց, կաթնամթերք, մսամթերք և այլն) 10.000 ԱՄՆ դոլար:	Ծրագրի համար լրացուցիչ կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում, ծրագրին իրականացվելու է հիմնադրամի ընդհանուր կազմակերպչական ծախսերի սահմաններում:
11.	Ամփոփականորեն շահառուների պատճանը չստրվող ծախսերը (կազմակերպչական ծախսեր), դրանց կատարման կարգը, այդ ծախսերի չափաբաժիններն ըստ ծրագրի փուլերի, եթե այդպիսիք առանձնացված են	Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների հետ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ (եթե համագործակցություն նախատեսվում է), համագործակցության բովանդակությունը, իրականացման կարգը*	Ծրագրի իրականացման արդյունավետության նկատմամբ վերահսկողություն կիրականացվի Անգլիայի «Հայկական ծառայություններ» բարեգործական ինքնադրամի կողմից:
13.	Ծրագիր արդյունավետության մեխանիզմների վերահսկողության մեքեն (եթե վերահսկողություն մեքենա է)	Կազմակերպության գործունեության վերաբերյալ սահմանված կարգով տեղեկատվություն ներկայացնել ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին պետեկամուտների կոմիտեին:

«Շողիկ» հայկական բարեգործական հասարակական կազմակերպություն ՀՀ հիմնադրված 26 փետրվարի 59/1, ՀՎՀՀ՝ 00438145

Գևորգ Մրմապյան



«Շողիկ» հայկական բարեգործական հասարակական կազմակերպության ՀՀ հիմնադրված 26 փետրվարի 59/1, ՀՎՀՀ՝ 00438145



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ ՈՐ Գ Ա Ն Ձ Ա Կ Ե Տ

0010, Երևան, Մեյիք-Աղայան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

20.5/3

22.03.12 № 3/38-2/3964-1

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 20.03.2012թ. N15/15.1/3782-12 գրությամբ ներկայացված «Շողիկ» հայկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հոգ Հայաստանին» ծրագրի մասին» ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմք, որ որոշման նախագծին կից ներկայացված ծրագրի <<6>>-րդ և <<9>>-րդ կետերով հստակ առանձնացված և ներկայացված չէ ծրագրի ժամկետները՝ ըստ համապատասխան ուղղությունների և անհրաժեշտ ֆինանսական միջոցների, իսկ <<10>>-րդ կետով՝ տարանջատված չեն արտերկրից ներմուծվող և ՀՀ տարածքում ձեռքբերվելիք ծառայությունների և ապրանքատեսակների արժեքները միմյանցից ընդհանուր տեսքով:

Հարգանքով՝

Ա.Ե.Եսել

Ատոմ Զանջուղազյան

034/7 358-12



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՐ. 5/3
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0078 Երևան, Հայաստան 41 Կ, հեռ. 380385
Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am

02/1833-12
26.03.12

**Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2012թ. մարտի 20-ի
15/15.1/3782-12 թվակիր հանձնարարականի

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայտնում ենք, որ «Շողիկ» հայկական բարեգործական հասարակական
կազմակերպության կողմից իրականացվող «Հոգ Հայաստանին» ծրագրի վերաբերյալ
առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Գ. Մուրադյան

035/7792-12

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա. Ստեփանյան, հեռ.՝ 380-227



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԺՐ. 5/3**

«22» 03 2012 թ.

N 41/69 ժ-5/1949-12

Ձեր 2012-03-20, 15/15.1/3782-12

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան
Քննարկելով Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Շողիկ» հայկական
բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հոգ
Հայաստանին» ծրագրի մասին» որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ
նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և
առաջարկություններ չունի:

Հարգանքներով՝

Յ. Բերիկյան

040/7364-12

Կատարող՝ Միջազգային կապերի բաժին
հեռ. 563-791



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

ԼՊ-5/3

ԼՊ-5-6/2423-12
22.03.12


ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. մարտի 20-ի համար 15/15.1/3782-12 գրությամբ կարծիքի
ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի՝ «Շողիկ» հայկական բարեգործական հասարակական
կազմակերպության կողմից իրականացվող «Հոգ Հայաստանին» ծրագրի մասին»
որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱՆՎԵՐԴՅԱՆ

004/7410-12



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ԼՊ-5/3

0201 ք. Աշտարակ, Վ. Պետրոսյան 4, Հեռ/Ֆաքս (+374 232) 3 22 51 E-mail marzpetaran@Aragatsotn.region.am
0201 ր. Աստրակ, В. Петросян 4, Тел /факс (+374 232) 3 22 51 E-mail marzpetaran@Aragatsotn.region.am
0201 с. Аштарак, V. Petrosyan 4, Tel /Fax (+374 232) 3 22 51 E-mail marzpetaran@Aragatsotn.region.am

ՕԳ 04.12 N 01/17934-12
Ձեր 20.03.2012թ. N 15/15.1/3782-12 գրության

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Առաջարկվում է <<Շողիկ>> հայկական բարեգործական հասարակական
կազմակերպության կողմից իրականացվող <<Հոգ Հայաստանին>> ծրագիրը որակել
բարեգործական:

Հարգանքով՝

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ

110/8580-12

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ



МАРЗПЕТ АРАПАТА

21.5/3

ք. Արտաշատ, Օգոստոսի 23-ի փ./60
Հեռ. /0235/ 2-52-16, /010/ 28-60-23

N 1/31-1/1270-12 "22.03.2012

Ձեր թիվ 15/15.1/3782-12
20.03.2012թ.

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
Նախագահ պարոն՝ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
„Շողիկ” Հայկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող
„Հոգ Հայաստանին” ծրագիրն առաջարկվում է ճանաչել բարեգործական:

ՄԱՐԶՊԵՏ՝

Է.ՔԱՐՍՅԱՆ

Կատ.՝ Գ.Եղիազարյան
Հեռ. /0235/ 2-05-77

111/3349-12

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆРЕСПУБЛИКА
АРМЕНИЯ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

МАРЗПЕТ АРМАВИРА

21.5/3

<< 21 >> 03 2012թ.

N 01/06/869-12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 20.03.2012թ N 15/15.1/3782-12 գրության տեղեկացվում է, որ
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի <<Շողիկ>> հայկական բարեգործական հասարակական կազմակերպության
կողմից իրականացվող <<Հոգ Հայաստանին>> ծրագրի մասին>> որոշման նախագիծը
քննարկվել է ՀՀ Արմավիրի մարզպետարանում և արժանացել հավանության:

Ձենք առարկում այն որպես բարեգործական որակելու:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Կատ՝ Փ. Կարապետյան
Ծ. Գրիգորյան
Լ. Մուշեղյան

112/7217-12



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ *20.5/3*

<< 22 >> 03 2012թ.
N: *01/1157-12*

ք. Գյումրի, Գ. Նժդեհի 16
հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր՝ 20.03.2012թ.
թիվ՝ 15/15.1/3782-12

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ Շիրակի մարզպետարանում քննարկվել է Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի «Շողիկ» հայկական բարեգործական հասարակական
կազմակերպության կողմից իրականացվող «Հոգ Հայաստանին» ծրագրի մասին»
որոշման նախագիծը:

Ձեռք առարկում ծրագիրը որակել բարեգործական:

Հարգանքով՝

Ա. ԳԻԶԻՐՅԱՆ

Հ.Արշակյան
/0312/3-16-26

116/7346-12



ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՏԵՂԱԿԱԼ *20.5/3*

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի I

N: *02/34-138984*

«27» 03 2012թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 20.03.2012թ. հ. 15/15.1/3782-15 գրության՝
տեղեկացնում եմ, որ Երևանի քաղաքապետարանում քննարկվել է
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի «Շողիկ» հայկական բարեգործական
հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հոգ
Հայաստանին» ծրագրի մասին» որոշման նախագիծը, որի վերաբերյալ
ներկայացնում ենք:

Ծրագրում ներկայացված է, որ շահառուների ցանկում են երևանաբնակ
թվով 400 սոցիալապես անապահով ընտանիքներ, գոհվածների ընտանիքներ
և, որ շահառուների ցուցակները կազմվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարարության և տեղական ինքնակառավարման մարմինների
հետ, մինչդեռ Երևանի քաղաքապետարանի կողմից որևէ շահառուի
վերաբերյալ տվյալներ ներկայացված չեն և ընդհանրապես կազմակերպության
հետ շահառուների վերաբերյալ քննարկում չի եղել:

Բացի այդ՝ հասկանալի չէ թե ի՞նչ ճամբարներում են կազմակերպվում
երեխաների հանգիստը, ինչպիսի՞

ժամանակահատվածում,
100/7989
28 03 2012

20.5/3
կրթադաստիարակչական ինչպիսի՞ ծրագրով, ո՞վ է վերահսկում այդ ամբողջ
գործընթացը և ո՞վ է կրում պատասխանատվությունը երեխաների համար:

Հետևաբար՝ նման թերություններով ծրագիրը չենք կարող որակել որպես
բարեգործական:

Հարգանքով՝

Ս. Արեւս

Կ. ԱՐԵՅԱՆ

Կատ. Ռ. Զաքարյան
հեռ. 51 41 79



Նախագահ Մայրի Հարիսոն
ք. Երևան, Նոր-Արեշ, 26փող, տուն 59/1
հեռ. (010) 433134: (091) 340124
Էլ. փոստ: shoghik@armenianministries.org.uk

20.5/3

Երևանի Քաղաքապետ պարոն Ս. Մարգարյան
պատճենը՝ ՀՀ Կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Ս. Տեր-Մինոյանին

Հարգելի՛ պարոն Ս. Մարգարյան

Ի պատասխան Ձեր 27.03.2012թ N 02/34-13898 հ զրույթյան պարզաբանում ենք՝


1) 400 սոցիալապես անապահով ընտանիքները կազմվում են՝ կազմակերպությունում գրանցված
շահառուներից և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից
ուղարկված (անձների և հասարակական կազմակերպությունների) դիմումների հիման վրա: ՀՀ
աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը հատկացվում է ներմուծված բեռների մի մասը,
որը օգտագործվում է սոցիալական տարբեր ծրագրերի համար:

2) Երեխաների հանգիստը կազմակերպվում է կազմակերպության կողմից վարձակալվող
ճամբարում: Ճամբարները կազմակերպվում են հունիսի 15-ից մինչև օգոստոսի 15-ը ընկած
ժամանակահատվածում հինգից յոթ հերթափոխով: Յուրաքանչյուր հերթափոխի տևողությունը հինգ օր է և
ընդգրկում է 35-40 երեխա: Հինգօրյա ճամբարները իրենց մեջ ընդգրկում են խաղային և ժամանցային
ծրագիր: Երեխաների համար պատասխանատվություն կրում է «Շողիկ» ՀԲՀԿ-ը:

Կից ներկայացվում է լրամշակված ծրագիրը:

«Շողիկ» ՀԲՀԿ-ի

տնօրեն՝



Գևորգ Մինասյան

10.5.2012թ

«Շողկ» հայկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հոգ Հայաստանին» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
ՀՀ ֆինանսների նախարարություն – 22.03.12, N 3/3.8-2/3464-12	
1. Որոշման նախագծին կից ներկայացված ծրագրի <<6>>-րդ և <<9>>-րդ կետերով հստակ արանձնացված և ներկայացված չէ ծրագրի ժամկետները՝ ըստ համապատասխան ուղղությունների և անհրաժեշտ ֆինանսական միջոցների, իսկ <<10>>-րդ կետով՝ տարանջատված չեն արտերկրից ներմուծվող և ՀՀ տարածքում ձեռքբերվելիք ծառայությունների և ապրանքատեսակների արժեքները միանցից ընդհանուր տեսքով	1. Կցված է ծրագրի լրամշակված տարբերակը
Երևանի քաղաքապետարան – 27.03.12, N 02/34-13898h	
1. Ուլքեր են 400 ընտանիք շահառուները Երևանից 2. Ինչ ճամբարներում է կազմակերպվում երեխաների հանգիստը և ով է պատասխանատու	1. Կցված են կազմակերպության պարզաբանումը և ծրագրի լրամշակված տարբերակը

20.5/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ


Ո Ր Ո Շ ՈՒ Մ
— ապրիլի 2012 թվականի N Մ-
քաղ. Երևան

20.5/4
-Ա

«ՎՈՐՈՂ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱԾՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
